ՄԵԾ ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ ԱՄՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Սուրեն Սարյան

Վերջին տարիների ընթացքում միջազգային քաղաքականության և անվտանգության գծով հետազոտությունների և հետազոտողների ուշադրության կենտրոնում է Մերձավոր և Միջին Արևելքի կամ, այսպես կոչված, Մեծ Մերձավոր Արևելքի տարածաշրջանը, որը բնութագրվում է նաև որպես «գլոբալ Բալկաններ», այն է՝ համաշխարհային քաղաքականության բացասական միտումների հիմնական աղբյուր: Սա վիթխարի մի տարածաշրջան է, որտեղ կենտրոնանում են արդի գրեթե բոլոր գլոբալ մարտահրավերները:

Մեծ Մերձավոր Արևելքն ԱՄՆ քաղաքականության ուշադրության կենտրոնում հայտնվեց դեռևս Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո և կապված սառը պատերազմի տրամաբանության, նավթային պաշարների վերահսկման, ամերիկյան ազգային անվտանգության տեսակետից սպառնալիք համարվող վտանգների հետ՝ այն աստիճանաբար վերածվեց ռազմավարական կարևորություն ունեցող տարածքի:

Բուն «Մեծ Մերձավոր Արևելքի» ծրագիրն առաջ քաշվեց դեռևս 1990-ական թթ. կեսերին՝ նախկին պետքարտուղար Ջեյմս Բեյքերի Հրապարակային քաղաքականության ինստիտուտի նախաձեռնությամբ: Այն նախատեսում էր Մերձավոր և Միջին Արևելքի հենքի վրա աշխարհաքաղաքական նոր գերտարածաշրջանի ստեղծում, որի մեջ էին ընդգրկվում Կենտրոնական Ասիան, Հարավային Կովկասը, Մերձավոր Արևելքի արաբական երկրները և Իսրայելը, Թուրքիան, ինչպես նաև Իրանը, Պակիստանն ու Հյուսիսային Աֆրիկան (Մաղրիբ): Որոշ քայլեր այդ նախագծի իրականացման համար կատարվեցին՝ արաբա-իսրայելական հակամարտության կարգավորման, Իրանի հետ հարաբերությունների մեղմացման, Կասպյան ավազանում էներգետիկ ծրագրերի նկատմամբ ուշադրության ավելացման տեսքով: Սակայն միայն 2001թ. սեպտեմբերի 11-ից հետո «Մեծ Մերձավոր Արևելք» նախագծի իրականացումը մտավ ակտիվ փուլ, և Ջորջ Բուշ-կրտսերի վարչակազմը հանեց այն հրապարակային քաղաքականության դաշտ: Այդ ժամանակվանից Միացյալ Նահանգները նախաձեռնեց և մինչ օրս վարում է Մեծ Մերձավոր Արևելքում բազմակողմանի, բազմաչափ աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական խաղ:

Ակնհայտ է, որ առաջիկայում ամերիկյան ներկայությունը տարածա-

շրջանում շարունակվելու է: Այսինքն՝ Միացյալ Նահանգները տարածաշրջանային տերություն կարելի է համարել: Այսօր ԱՄՆ-ը նպատակաուղղված ստեղծում է «ազատ մայրուղի» *(freeway),* որը տարածվում է Բալկաններից մինչև Չինաստանի սահմանները, որտեղ անխափան կարող է տեղափոխել իր ռազմական, տնտեսական ուժերը և պաշարները, որտեղ չի կարող գոյություն ունենալ իրեն հակառակվող որևէ վարչակարգ և որտեղ ամերիկյան գերակայության հաստատումը բխում է ինչպես Մեծ Մերձավոր Արևելքում անվտանգության ապահովման և ահաբեկչության վերացման, այնպես էլ համաշխարհային Ամերիկյան կայսրության ստեղծման տրամաբանությունից: Քայլ առ քայլ ամերիկացիները մաքրում են «ֆրիվեյը»՝ սկսելով Հարավսլավիայից, ապա անցնելով արաբա-իսրայելական հակամարտության կարգավորմանը (այլ հարց է, թե ինչ հաջողությամբ), զսպելով Թուրքիային (Իրաքի պատերազմից հետո այս երկրի դերակատարումն աստիճանաբար նվազում է, քանզի պարզվեց, որ ԱՄՆ-ը կարող է իր հարցերը լուծել և առանց Անկարայի), վերացնելով թալիբներին Աֆղանստանում և Սադամ Հուսեյնի վարչակարգն Իրաքում, հաստատվելով Կենտրոնական Ասիայում և Հարավային Կովկասում, հնազանդեցնելով Լիբիային, եվրոպացիների հետ միասին հարկադրելով Սիրիային զորքերը դուրս բերել Լիբանանից, իրականացնելով «գունավոր» հեղափոխություններ տարածաշրջանում: Այս «ազատ մայրուղու» վրա դեռևս մնում է մեկ խոշոր խոչընդոտ՝ Իրանը: Սակայն այն արդեն վերցվել է աքցանի մեջ, իսկ Լիբանանում «Հեզբալլահի» ազդեցության թուլացումից և շուտով Ադրբեջանում ամերիկյան ռազմական ներկայության հաստատումից հետո Իրանի Իսլամական Հանրապետությունը կզրկվի նաև Հարավային Կովկասում և Միջերկրածովյան ավազանում խուսանավելու հնարավորություններից:

Ամերիկյան արդի քաղաքականության՝ «Մեծ Մերձավոր Արևելքի», «ֆրիվեյի» և «ցանցային պատերազմների» ճարտարապետները, որոնք ընդգրկված են Բուշի վարչակազմում, Բեյքերի Հրապարակային քաղաքականության ինստիտուտում, RAND կազմակերպությունում և «Նոր ամերիկյան դար» ծրագրում (արժե հիշատակել փոխնախագահ Դիկ Չեյնիի, պաշտպանության նախարար Դոնալդ Ռամսֆելդի, պետքարտուղար Քոնդոլիզա Ռայսի, պաշտպանության նախկին փոխնախարար, այժմ Համաշխարհային բանկի նախագահ Փոլ Վուլֆովիցի, Բուշի թիմին մոտ կանգնած վերլուծաբաններ Դևիդ Ֆռամի, Ռոբերտ Կեյգանի, Ֆրենսիս Ֆուկույամայի, Ուիլյամ Քրիսթոլի, Զալմայ Հալիլզադի անունները) չեն զլանում նշել, որ ԱՄՆ-ը պետք է իրապես ստանձնի համաշխարհային առաջնորդի անվիճարկելի դերը՝ տարածելով իր ազդեցությունն աշխարհի բոլոր ծայրերում և ճնշելով ամերիկյան շահերին ու հետաքրքրություններին սպառնացող

ցանկացած վտանգ՝ ներառյալ պետություններ, միջազգային կառույցներ և զանազան խմբավորումներ: Սկզբունքորեն այս տեսակետից չեն տարբերվում ամերիկյան պետական գործիչներ, նախագահներ Ջորջ Բուշ-ավագի և Բիլ Քլինթոնի, նախկին պետքարտուղարներ Հենրի Քիսինջերի, Ջեյմս Բեյքերի, Մադլեն Օլբրայթի, ազգային անվտանգության հարցերով նախագահի նախկին օգնականներ Զբիգնև Բժեզինսկու և Բրենթ Սքոուքրոֆթի հայացքները, միայն թե նրանք առաջարկում են գործել այլ մեթոդներով:

Այլ խնդիր է, թե որքանով են իրենք՝ ամերիկացիներն այսօր պատրաստ ստանձնել կայսրական բեռը և ինչքան ժամանակ ի վիճակի կլինեն կրել այն: Սակայն դա արդեն այլ քննարկման նյութ է:

Ակնհայտ է նաև, որ Միացյալ Նահանգները կանի ամեն ինչ, որպեսզի Մեծ Մերձավոր Արևելքում և Եվրասիայում կասեցվի որևէ այլ տերության կամ տերությունների խմբավորման գերիշխանության ի հայտ գալը, որն ունակ կլինի մարտահրավեր նետել աշխարհում ամերիկյան գերակայությանը և վնասել ամերիկյան շահերին՝ դրանով իսկ վտանգելով տարածաշրջանային հավասարակշռությունը[1]: Դա հաստատում է նաև Զբիգնև Բժեզինսկին. «Մոտ կես դար Մերձավոր Արևելքը Եվրոպայի և Ասիայի հետ միասին հանդիսանում է այն երեք գոտիներից մեկը, որը ռազմավարական կարևորություն է ներկայացնում Միացյալ Նահանգների ազգային շահերի համար: Թշնամական տերության գերիշխանությունը կամ որևէ խոշոր հակամարտություն այս գոտիներից յուրաքանչյուրում հզոր մարտահրավեր կարող են հանդիսանալ Ամերիկայի՝ գլոբալ հավասարակշռությունն ապահովելու ունակությանը, ինչից կախված է միջազգային կայունությունը»[2]:

Բնականաբար, այս ռազմավարության շրջանակներում Միացյալ Նահանգներն իր եվրոպական որոշ դաշնակիցների հետ միասին կանի ամեն հնարավոր բան, որպեսզի թույլ չտա Ռուսաստանի նախկին ազդեցության վերականգնումը և Չինաստանի հզորացումն ամբողջ տարածաշրջանում:

Միևնույն ժամանակ, հասկանալով, որ արևմտյան քաղաքակրթության գերիշխանությանն այսօր մարտահրավեր է նետված իսլամական ահաբեկչության կողմից, ԱՄՆ-ը, ներխուժելով տարածաշրջան, կանխարգելիչ հարվածներ է հասցնում այդ ցանցի օջախներին կամ էլ ուղղում նրա ուժերի ու ռեսուրսների մեծ մասը հենց դեպի մահմեդական աշխարհի ներսը, ինչպես դա այսօր տեղի է ունենում Իրաքում, Եգիպտոսում կամ մասամբ Պակիստանում:

Հաջող ռազմական գործողությունների համար ամերիկյան զինուժը

[1] Goble, Paul, From Myths to Maps: American Interests in the Countries of Central Asia and the Caucasus, «Caspian Crossroads», Vol 3, N 1, Summer 1997.

[2] Бжезинский Збигнев, Запад не смог предложить достойного решения, «Corriere Della Sera», www.inosmi.ru/text/stories/02/10/07/3168/143050.html

կարիք է զգում քիչ թե շատ վստահելի և կայուն դաշնակից երկրների տարածքի, որտեղ ծրագրում է տեղակայել իր շարժական օդային ռազմակայանները: Թուրքիայում ռազմական ներկայության թուլացման, Սաուդյան Արաբիային չվստահելու և Ուզբեկստանից հեռանալու հետևանքով Միացյալ Նահանգներն ավելի զգայուն է վերաբերվելու դաշնակիցների ընտրությանը: Այդ համատեքստում Միացյալ Նահանգները, փաստորեն, սկսում է տարածաշրջանում իր աջակցության համար անհրաժեշտ ցանցի ձևավորումը, որը ներառում է քաղաքական, ռազմական և տնտեսական միջոցառումներ: Ուստի, ԱՄՆ ուշադրության կենտրոնում է լինելու տարածաշրջանի երկրներում օդային, ծովային և ցամաքային ուղիների ենթակառուցվածքների զարգացման խնդիրը[1]:

Դա նշանակում է, որ «ազատ մայրուղու» ռազմավարության շրջանակներում Միացյալ Նահանգներն աջակցելու է Մեծ Մերձավոր Արևելքի որոշ պետությունների ուժեղացմանը և մյուսների թուլացմանը: Այս տեսանկյունից առանցքային պետք է համարվեն Թուրքիան, Իսրայելը, Լիբանանը, Սիրիան, Իրաքը, Վրաստանը, Հայաստանը և Իրանը, որոնք, պատմական և մշակութային հանգամանքների բերումով, ունեն ամերիկյան նախագծի հիմնական օբյեկտները դառնալու առավել մեծ շանսեր: Նույն *RAND*-ի փորձագետները դեռևս երեք տարի առաջ կանխատեսում էին, որ Աֆղանստանում քիչ թե շատ խաղաղության հասնելուց հետո Կենտրոնական Ասիայում կառաջանան պայմաններ ամերիկյան ռազմական ներկայության նվազեցման համար, և աշխարհաքաղաքական նկատառումները, ասել է թե՝ Չինաստանի և Ռուսաստանի գործոնները հաշվի առնելու հարցը, կստիպեն Միացյալ Նահանգներին որոշ չափով կրճատել իր ներկայությունը: Միևնույն ժամանակ, կառաջանա հենց Կասպյան ավազանում ամերիկյան ռազմական ներկայության ուժեղացման խնդիրը, քանզի աշխարհաքաղաքական և էներգետիկ գործոնները մեծացնելու են ամերիկյան քաղաքականության մեջ Ադրբեջանի և Ղազախստանի կարևորությունը:

Անշուշտ, ամերիկյան քաղաքականության մեջ կարևորը դեռևս մնում է Իրաքը: Այն ընտրվեց որպես Մեծ Մերձավոր Արևելքի առանցքային պետություն, որտեղ փոխելով դրությունը՝ հնարավոր կլինի արմատական փոփոխություններ մտցնել ամբողջ տարածաշրջանում: Այլ հարց է, թե ներկա պահին որքանով են այդ փոփոխություններն արդյունավետ: ԱՄՆ-ը շարունակում է Իրաքը համարել այն առանցքը, որի շուրջ հնարավոր կլինի իրականացնել իրական բարեփոխումներ Մեծ Մերձավոր Արևելքում և այն դարձնել կայունության, խաղաղության ու զարգացման գոտի: Իրաքը պետք

[1] Szayna, Thomas S. and Oliker, Olga, Faultlines of Conflict in Central Asia and the South Caucasus, www.rand.org/publications/MR/MR1598/

է կատարի մոտավորապես նույն դերը, ինչ կատարում էր հետպատերազմյան Եվրոպայում Գերմանիան կամ Ասիայում՝ Ճապոնիան[1]: Իհարկե, սա չափազանց լավատեսական և իրաքյան ու մերձավորարևելյան իրողությունների, մեղմ ասած, ոչ համարժեք գնահատական է:

Ինչ վերաբերում է տարածաշրջանի մյուս առանցքային օղակին՝ Իրանին, ապա նրա դեմ ռազմական ակցիան այսօր գուցեն քիչ հավանական է, սակայն պետք է հաշվի առնել, որ իրանական վարչակարգի փոփոխության համար կարող է պահանջվել բավական երկար ժամանակ, որի ընթացքում ամբողջ տարածաշրջանում և նրանից դուրս կարող են սկսվել անդառնալի գործընթացներ: Այս գործոնը հաշվի առնելով՝ Միացյալ Նահանգները որոշակի պահի կարող է դիմել ներխուժման:

Ստեղծվող պայմաններում Թուրքիայի և Իրանի՝ այդ երկու միջինարևելյան նախկին կայսրությունների համար նախատեսվում է ավելի նվազ կամ թուլացված ինքնուրույն աշխարհաքաղաքական դերակատարում: Թուրքիայի «եվրոպականացումը» (միացումը ԵՄ-ին) և Իրանի սպասվող «արևմտականացումը» (լինի այն ամերիկյան ներխուժման կամ նոր, արդեն հակակղերական հեղափոխության հետևանքով) թույլ կտար Միացյալ Նահանգներին և Եվրոպային ստեղծել Մեծ Մերձավոր Արևելքում իր «միջնաբերդերը»՝ հանձինս Թուրքիայի, Իրանի, Իսրայելի և Հարավային Կովկասի[2]: Վրաստանի և Հայաստանի դիրքերն, իրոք, առավել նպաստավոր են՝ տարածաշրջանում ամերիկյան տարանցիկ հենակետեր դառնալու համար: Ավելին, այս երկրներում առկա են ենթակառուցվածքներ, որոնք կարող են օժանդակել ամերիկյան և ՆԱՏՕ օդուժին ռազմական գործողությունների ծավալման դեպքում:

Վերոնշյալ «ազատ մայրուղին» ապահովելու է նաև Արևելքից Արևմուտք ձգվող հիմնական էներգետիկ մայրուղիների անվտանգությունը, քանի որ, համաձայն ամերիկյան Ազգային էներգետիկ ռազմավարության, Միացյալ Նահանգները պետք է ամեն գնով ապահովի համաշխարհային էներգետիկ հավասարակշռությունը: Երբևէ գաղտնիք չի էլ եղել, որ Միացյալ Նահանգների քաղաքականությունն ուղղված է դեպի Մեծ Մերձավոր Արևելքի ռեսուրսներն ազատ և անխափան մուտքն ապահովելուն: «Մեծ Մերձավոր Արևելքի» ռազմավարության շրջանակներում ԱՄՆ-ը հնարավորություն ունի հսկողություն հաստատել նավթի համաշխարհային պաշարների կեսից ավելիի նկատմամբ: Իսկ այս փաստով Վաշինգտոնն ունակ կլինի հաստատել խաղի իր «կանոնները» աշխարհի մնացած ուժային կենտրոնների համար:

[1] Rice, Condoleezza, The Transformation of the Middle East, «The Washington Post», 7.08.2003.
[2] Szayna, Thomas S. and Oliker, Olga, Faultlines of Conflict in Central Asia and the South Caucasus, www.rand.org/publications/MR/MR1598/

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ սեպտեմբերի 11-ից հետո սկսեց արմատապես փոխվել Մեծ Մերձավոր Արևելքի տարածաշրջանի աշխարհաքաղաքական և ռազմավարական դիմագիծը: Այն դարձավ աշխարհի միակ գերտերության՝ ԱՄՆ արտաքին քաղաքականության օրակարգի առաջնահերթությունը: Առանց այդ էլ կարևոր այս տարածաշրջանում ամերիկյան ներկայությունը Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո եղել է բավական շոշափելի, իսկ Աֆղանստանի և Իրաքի պատերազմների հետևանքով այդ ներգրավվածությունը բազմապատկվեց:

Միացյալ Նահանգները Մեծ Մերձավոր Արևելքը դիտում է ամբողջության մեջ: Այս տեսանկյունից տարածաշրջանում ամերիկյան քաղաքականության վրա առավել մեծ ազդեցություն ունեն երեք գործոն: Առաջին՝ Արաբական Արևելքի, Իրանի և Կասպյան ավազանի նավթի և գազի հսկայական պաշարները, որոնց նկատմամբ հսկողությունը թույլ կտա վերահսկել ոչ միայն այս գերտարածաշրջանը, այլև Չինաստանի և Հնդկաստանի տնտեսությունների զարգացումը, որն էապես կախված է հենց այս տարածաշրջանից էներգետիկ ռեսուրսների ներկրումից:

Երկրորդ՝ տարածաշրջանի վերահսկելիությունն այսօր մեծապես պայմանավորված է տեղի քաղաքական վարչակարգերի բնույթով և ռազմական ուժերի դասավորությամբ: Այս առումով Վաշինգտոնում գերադասում են տարածաշրջանի ժողովրդավարացումը, քանի որ, ինչպես վերջերս հայտարարել է ԱՄՆ պետքարտուղար Քոնդոլիզա Ռայսը, տասնամյակներ շարունակ Միացյալ Նահանգները գերադասում էր գործ ունենալ Մեծ Մերձավոր Արևելքի երկրներում ավտորիտար կամ բռնապետական վարչակարգերի հետ՝ հույս ունենալով ապահովել տարածաշրջանային կայունությունը, սակայն Ամերիկան չհասավ ո՛չ կայունության, ո՛չ էլ ժողովրդավարության[1]: Թեև, կարծես, Սաուդյան Արաբիայի կամ Եգիպտոսի դեպքում ժողովրդավարացումը ներկա պահին չի կարող լինել ամերիկյան առաջնահերթությունների շարքում, քանի որ ժողովրդավարությունն այսօր Սաուդյան Արաբիայում նշանակում է «Ալ-Կաիդա», իսկ Եգիպտոսում՝ «Մահմեդական եղբայրներ»: Բժեզինսկու բնութագրմամբ, «որպեսզի Բուշի վարչակազմի նախաձեռնությունը հաջողությամբ պսակվի, այն պետք է համընկնի տարածաշրջանային իրողությունների հետ»[2]:

[1] Remarks at the American Israel Public Affairs Committee's Annual Policy Conference, Secretary of State Condoleezza Rice, Washington Convention Center, Washington, DC, May 23, 2005 http://www.state.gov/secretary/rm/2005/46625.htm

[2] Brzezisnki , Zbignew, The Wrong Way to Sell Democracy to the Arab World, «The New-York Times», March 8, 2004.

Եվ երրորդ, ոչ պակաս կարևոր գործոնն է իսլամական ահաբեկչության դեմ ծավալվող պայքարը, որը ենթադրում է ամբողջ արևմտյան աշխարհի համախմբվածություն, իսլամական աշխարհի ներսում ներքին պառակտումների բորբոքում և տվյալ պատերազմի փոխադրում հենց մահմեդական երկրներ:

Թերևս, պետք է համաձայնել այն տեսակետի հետ, թե «գլոբալ Բալկաններում» կայունացման ջանքերը կտևեն մի քանի տասնամյակ և առաջընթացը, լավագույն դեպքում, կլինի աստիճանական ու հետընթացներով»[1]:

[1] Brzezinski , Zbigniew, Excerpt from «The Hegemonic Quicksand», «In the National Interest», February 18, 2004.